

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՈԾԱԿՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Շչերբակով Օ.Վ., Գևորգյան Ռ.Հ., Մկրտչյան Զ.Ա., Աբգարյան Տ.Ա., Ադամյան Է.Վ.,  
Սոլովյովա Վ.Վ., Գևորգյան Հ.Շ.

ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն, Մոլեկուլային  
մակարոնդարանության լաբորատորիա, Երևան, Հայաստան

[hsmgevorgyan@gmail.com](mailto:hsmgevorgyan@gmail.com)

**Բանալի բառեր՝** մոծակներ, *Aedes albopictus*, փոխանցողներ, *Dirofilaria spp.*, զոոնոզներ

Վարակիչ հիվանդությունների մոտ 60%-ը ունի զոոնոզ ծագում: Որոշ մակարոնդային զոոնոզները պատկանում են տրանսմիսիվ՝ հոդվածոտանիններով փոխանցող հիվանդությունների շարքին և լուրջ սպառնալիք են ներկայացնում հանրային առողջության համար (1,2): Հայաստանում դրանցից առավել վտանգավոր են դիրոֆիլարիոզը և լեյշմանիոզը, որոնց հիմնական փոխանցողները մոծակներն են: Հայաստանում գրանցված է մոծակների 31 տեսակ (3): Վերջին տարիներին արձանագրվել է *Aedes albopictus* վտանգավոր ինվազիվ մոծակի ներթափանցում մեր երկրի տարածք (4), ինչը վկայում է մոծակների ֆաունայի մշտադիտարկման անհրաժեշտության մասին: Այս հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել Հայաստանի տարբեր մարզերի, հատկապես ուրբանացված տարածքների, մոծակների տեսակային բազմազանությունը և գնահատել զոոնոտիկ հիվանդությունների, մասնավորապես դիրոֆիլարիոզի, փոխանցման ռիսկը:

Ընդհանուր առմամբ 2024-2025թթ. ընթացքում Հայաստանի տարբեր մարզերից հավաքվել և հետազոտվել է 1264 մոծակի առանձնյակ: Տեսակների նույնականացումը իրականացվել է Walter Reed Biosystematic Unit-ի էլեկտրոնային որոշիչի օգնությամբ (5), իսկ դիրոֆիլարիաների թրթուրների հայտնաբերումը իրականացվել է մոծակների փորիկի պարունակյալի կոմպրեսիոն հետազոտման եղանակով:

Արդյունքում, արդեն իսկ հայտնի մոծակների 31 տեսակից գատ, Հայաստանի ֆաունայի համար գրանցվել է 6 նոր տեսակ: Գերիշխող տեսակներն են՝ *Culex pipiens* (25,87%), *Aedes caspius* (24,29%) և *Culex territans* (18,51%): Ինչ վերաբերվում է *Aedes albopictus* ինվազիվ տեսակին, ապա այն լայնորեն տարածված է Տավուշի մարզում և Իջևան քաղաքի տարածքից գրեթե դուրս է մղել մոծակների այլ տեսակներին: Հատկանշական է *Culex quinquefasciatus* ինվազիվ տեսակի արձանագրման փաստը

սկզբից Մեղրու տարծաշրջանում, իսկ հետագայում նաև Արարատի մարզում և Երևանում, ինչը վկայում է այս տեսակի ակտիվ աշխարհագրական էքսպանսիայի մասին: *Dirofilaria spp.* թրթուրները հայտնաբերվել են 5 մոծակի մոտ (0,4%), ընդ որում, 3 վարակված մոծակ հայտնաբերվել է Երևանում (0,6%), մեկական՝ Արարատում (1,08%) և Արմավիրում (0,85%): Վարկված մոծակներից 2-ը պատկանում են *Culex pipiens* տեսակին (0,16%), 2-ը՝ *Aedes caspius* (0,16%), 1-ը՝ *Culex territans* (0,08%) տեսակին: Հայտնաբերված պատկերը վկայում է Արարատյան դաշտում դիրոֆիլարիոզի գործող օջախի և մոծակների միջոցով հարուցիչների փոխանցման ռիսկի մասին: Ի դեպ, դիրոֆիլարիաների թրթուրներով մոծակների վարակվածության ուսումնասիրումը իրականացվել է Հայաստանում առաջին անգամ: Ներկայումս ընթանում են մոլեկուլային գենետիկական հետազոտություններ՝ դրանց տեսակը ճշգրիտ որոշելու նպատակով:

#### Օգտագործված գրականություն

1. Esposito MM, Turku S, Lehrfield L, Shoman A. The Impact of Human Activities on Zoonotic Infection Transmissions. *Animals*. 2023; 13(10):1646.
2. Norbert Becker, Dušan Petric' · Marija Zgomba, Clive Boase et al. Mosquitoes and their Control. Second Edition. Springer. Heidelberg-Dordrecht-London-New York, 2010: 1-577.
3. Shchebrakov O.V., Aghayan S.A., Gevorgyan H.S., Burlak V.A., Fedorova V.S., Artemov G.N. 2023. An updated list of mosquito species in Armenia and Transcaucasian region responsible for *Dirofilaria* transmission: review of published research. *Journal of Vector-Borne Diseases*. 2023; 60(4): 343-352.
4. Paronyan L, Babayan L, Manucharyan A, et al. 2020. The mosquitoes of Armenia: review of knowledge and results of a field survey with first report of *Aedes albopictus*. *Parasite* 27, 42.
5. [Search species profiles | Walter Reed Biosystematics Unit \(WRBU\) \(si.edu\)](#)